«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

Դաստիարակ՝ Էլիկ Սարգսյան

Մանկապարտեզ՝ « Թիվ 3 ՆՈՒՀ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն…….3

Հետազոտության նպատակը……..……..5

Ավագ խումբ. Ինտեգրված պարապմունք: Գրաճանաչություն……7

Պարապմունքի դիտարկում……..13

Եզրակացություն…….....14

Գրականության ցանկ……15

Ներածություն

Անկախ նրանից, թե որտեղ են ապրում մերօրյա երեխաները, նրանց ամբողջ կյանքի ընթացքում հարկ է լինելու դիմակայելու հասարակական, քաղաքական և միջավայրային փոփոխություններին: Այսօրվա արագընթաց փոփոխությունները կարևոր են դարձնում երեխաներին ամբողջ կյանքում սովորելու սեր ներարկելը:

Երեխաներին ուսումնատենչ սովորողներ դարձնելու նպատակով <<Քայլ առ քայլ>> ծրագիրը հիմքեր է կառուցում այն գիտելիքների և հմտությունների համար, որոնք արդիական են ակնկալվող մարտահրավերները դիմակայելու իմաստով: Ծրագիրն ընդունում, գնահատում և քաջալերում է այն հատկանիշների զարգացումը, որոնք անհրաժեշտ են մեր ժամանակներում: Այդպիսի կարողություններից են՝ խնդիրներ հայտնաբերել և խնդիրներ լուծողներ լինել, ստեղծագործ, պատկերավոր մտածողությամբ օժտված և հնարամիտ լինել:

Աշխարհը կարելի է ճանաչել 2 ճանապարհով. Գիտության և արվեստի: (Վ. Գ. Բելինսկի)

Անփոխարինելի է արվեստի դերը երեխայի զարգացման գործում: Հասարակությանը անհրաժեշտ են ստեղծագործական մտածողության անհատականություններ՝ ընդունակ կառուցելու և բարեկարգելու մոլորված աշխարհը:

Ժամանակակից մանկավարժությունն իր անհատակողմնորոշիչ դիրքորոշումներով ուղղված է յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը:

<<Քաղաքակրթության գլխավոր խնդիրը մարդուն մտածել սովորեցնելն է>>(Թ. Էդիսոն)

Միտքը իմացության միասնական միավոր է: Մտավոր գործողությունների այն համակարգը, որի առջև կոնկրետ նպատակ է դրված կոչվում է ինտելեկտուալ գործողություն: <<Ինտելեկտը միջոցները նպատակին հարմարեցնելու ընդունակություն է>>:

Նոր պահանջների համաձայն դաստիարակությունը առավել արդյունավետ դարձնելու հիմքում դրվում են սովորելը և սովորեցնելը: Նյութի մատուցման և երեխաների հետաքրքրությունը մեծացնելու մեջ մեծ նշանակություն ունի նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը: Լավ արդյունք ստանալու համար դաստիարակը պետք է լինի ստեղծագործ, նորարար մարդկային բարձր որակներով:

<<Այն ուսուցիչը, որը կարողանում է իր սաներին օժտել աշխատանքի ուրախություն գտնելու ընդունակությամբ, արժանի է դափնեպսակի>>: Էլբերթ Հաբարտ

Հետազոտության նպատակը

Դաստիարակի խնդիրն է անհատ երեխաների և ամբողջ խմբի համար համապատասխան նպատակներ սահմանելը, երեխաների հետաքրքրություններին արձագանքելը, յուրաքանչյուր երեխայի ուժեղ և թույլ կողմերը հարգելը, հետաքրքրասիրությունն արթուն պահելը: Երեխայից ակնկալվում է առաջադրանքը հաղթահարել գործնական աշխատանքով և հմտանալ դրանում հաջորդ քայլին անցնելուց առաջ: Ճիշտ պատասխանը հաճախ ամրակայում է գործնական կիրառմամբ և խրախուսմամբ: Երեխայի գործունեության զարգացման հիմքը ընկալումն է: Եվ նրա մոտ ցանկություն է առաջանում ավելին իմանալու մղումը:

Դաստիարակի առջև երեխաների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման բավականին հստակ պահանջ է դրված:

Ուսուցման գործընթացը իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ: Մեթոդը նպատակին հասնելու միջոց է և այն արդյունավետ է, երբ օգտագործում ես խոսքային, դիտողական, գործնական մեթոդներ:

Ակտիվ ուսուցման մեթոդներից է մտատարափի կամ մտային գրոհի մեթոդը, այն վեր է հանում ուսուցանվող խնդրի շուրջ բոլոր կարծիքներն ու խնդիրները: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար պարապմունքից պարապմունք:

Յուրաքանչյուր նպատակային պլանավորված աշխատանքի արդյունքների հիմքում ընկած է խաղը: Պարապմունքի հակադիր ձևը խաղն է և խաղային դրդապատճառները պարապմունքի կառուցվածքային տարբեր մասերում: Խաղի և պարապմունքի ինքնատիպ միավորումը դառնում է դիդակտիկ խաղ:

- Խաղի միջոցով զարգանում է երեխայի հոգեկան գործընթացը:
- Խաղում ազատ, ինքնուրույն գործում են, ինքնահաստատվում:

- Խաղը որպես ստեղծագործական գործունեություն, նպաստում է երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:
- Խաղը երեխայի զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, նրա կենսագործունեության կազմակերպման կարևոր ձևը:

Այս հետազոտական աշխատանքի շրջանակներում նպատակ է դրվել ուսումնասիրել սաների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների խթանման գործընթացի առանձնահատկությունները: Նպատակին հասնելու համար վեր են հանվել այն խնդիրները, որոնց իրագործման ընթացքում ես կհասնեմ իմ նպատակի արդյունքին:

Ավագ խումբ

Ինտեգրված պարապմունք: Գրաճանաչություն

Թեմա՝

- ✓ Ամրապնդել երեխաների ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերելու կարողությունը:
- ✓ Ծանոթացնել <<Ա>> հնչյուն-տառին:

Նպատակ՝

- ✓ Կամրապնդեն հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող բառերի հնչյունային վերլուծություն կատարելու կարողությունը:
- ✓ Կտարբերեն հնչյունները (ձայնավոր, բաղաձայն) ըստ արտասանության:
- ✓ Կսովորեն բառի մեջ ա հնչյունի տեղը:
- ✓ Կկազմեն նոր բառեր, որոնցում ա հնչյունը կլսվի բառասկզբում, բառամիջում, բառավերջում:
- ✓ Կսովորեն, որ յուրաքանչյուր հնչյուն ունի իր արտասանության ձևը, իսկ տառը՝պատկերը:
- ✓ Կշոշափեն մեր դիդակտիկ նյութ Ա տառը:
- ✓ Կուրվագծեն Ա տառը:

Խթանում՝

- ✓ Ո՞վ է ստեղծել հայերենի այբուբենը:
- ✓ Ի՞նչ լեզվով ենք մենք խոսում:
- ✓ Որո՞նք են հայերենի ձայնավոր հնչյունները:
- ✓ Ինչու՞ են կոչվում ձայնավորհնչյուններ:
- ✓ Ի՞նչ է վանկը: Կազմել բառեր եւ ծափերով վանկատել:

Իմաստի ընկալում՝

Մարդիկ իրար հետ ինչպե՞ս են շփվում (խոսելով և այդ պատճառով պետք է սովորեն մեր մայր լեզուն)

Ա՛խ լեզու՛, լեզու՛, թե չլինեիր, մարդ ինչի՞ նման կլիներ:

Ազգ պահողը, իրար հետ միացնողը լեզուն է ու հավատքը:

Հնչի՛ր դու, հնչի՛ր այժմ և հավիտյան

Մայրենի լեզու մայրենի բարբառ

Լեզուն է ամեն ժողովրդի ազգային գոյությունը, ինքնուրույնության եւ հանճարի ամենախոշոր դրոշմը, հոգին ու հոգեբանությունը: (Հ.Թումանյան)

Երեխանե՛ր այսօր մենք կծանոթանանք մեր <<Ոսկեղենիկ հայերենի>> առաջատառ Ա-ի հետ: Ինչու՞ ենք անվանում առաջատար, որովհետև Մ.Մաշտոցը ստեղծել է սկզբում Ա տառը և նա տառադարանում զբաղեցնում է առաջին տեղը: Ինչպես զինվորն է պաշտպանում մեր հայրենիքը, այնպես էլ մեսրոպյան գրերը դարեր շարունակ դարձան լույսի, հույսի սյուներ, ազգը պահող լույսի շողեր:

Մ.Մաշտոցը հոգին է հայի

Եվ դարեր-դարեր նման մի ջահի

Մեր ճամփին պիտի շողա ու վառվի,

Որ հայը ապրի ու չմոլորվի:

Հնչյունային վերլուծության են ենթարկում երեխաները մի շարք բառեր: Գտնում են ա հնչյունի տեղը:

Երգ <<Ես հնչյուն եմ>>. այն համարում ենք ֆիզ-դադար, որովհետև երեխաները հերթականությամբ գործողությունները ցույց են տալիս: Այնուհետև երեխաները արտասանում են, փորձում են գուշակել հանելուկներ:

Պարապմունքի ընթացքում ներս է մտնում մեր <<Արև>>-ը՝ իր ճառագայթները տարածելով այնպես, որ երեխաները յուրաքանչյուր ճառագայթից բռնելով, ա-ով սկսվող ինչ-որ առարկա, իր, համեմունք, տեսարժան վայր են ներկայացնում՝ փորձելով շարժել երեխաների հետաքրքրությունը, ստեղծագործական միտքը: Արդյունքում յուրաքանչյուրն իր պատկերի մասին մի նոր բան է սովորում: Խմբում

ներկա 25 երեխայի ստեղծագործական վառ երևակայությունը և մտքի տարափը ներկաներին հիացրեցին: Տեղի է ունենում մտքերի փոխանակում և այդ շարժախաղով երեխաները ավարտում են իրենց պարապմունքը:

Պարապմունքից հատված. Այս Զևաչափով հանդես են եկել բոլոր երեխաները.MOV

Բաց են նկարչության, արվեստ, մաթեմատիկայի, ծեփի կենտրոնները: Երեխաները ուրվագծում, նկարում, կառուցում, ծեփում են Ա տառը: Եվ երգում են, և աշխատում են, և հիանում իրենց աշխատանքով: Վերջում երեխաները համտեսում են իրենց համար նախօրոք պատրաստված Ա տառի տեսքով քաղցր ու համեղ բուլկին:

Կշռադատում՝

1.Ի՞նչ սովորեցինք մենք այսօր

2.Ինչպե՞ս անցավ մեր պարապմունքը

3.Ինչը՞ ձեզ ավելի շատ դուր եկավ պարապմունքի ընթացքում

4.Ինչը՞ կցանկանայիք փոխել

Պարապմունքի ընթացքում երեխան բերկրանք է ապրում աշխատանքի, արվեստի ստեղծագործությունների, գեղեցկության հանդեպ, իսկ իր հաջողությունների համար՝ հպարտություն: Զարգանում է հատուկ վերաբերմունք բանավոր խոսքի նկատմամբ: Բանավոր հնչյունային կառուցվածքի մեջ կողմնորոշվելու կարողությունն է զարգանում: Սովորում են ինքնուրույն կազմել մտքեր, խոսքային միջոցներ, ստեղծագործական մտահաղացումներ:

Գործողությունների մեջ ճիշտ կողմնորոշվելու, ընտրել իրեն հոգեհարազատ նյութը, ինքնուրույն տեղադրել թղթի վրա, պատկերավոր ձևով գունավորել, ստեղծագործել։ Դաստիարակը սովորեցնում է ճիշտ դիրքով պահել գիրքը, տարբերել շապիկը, երեսը, սովորում է, որ գրում և կարդում են ձախից աջ, վերևից ներքև։

Պարապմունքները երեխաների համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնելու իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները։ Պարապմունքի ժամանակ երեխաները հետազոտում են, պրպտում են, նոր լուծումներ գտնելու, շարժվում են նրանց հետաքրքրության ու ստեղծագործական մտքի ունակությունները։

Երեխաների դաստիարակության խնդիրն է՝ կարողանալ դիտարկել և որոշել նրա ուղղվածությունն ու կատարելագործել դաստիրակությսն մեթոդները։ Դաստիարակը երեխային հաղորդում է մարդկության կողմից մշակված ծրագրերն ու եղանակներն, որոնց լավ տիրապետելն էլ տանում է դեպի յուրահատուկ մարդկային ընդունակությունների զարգացում։

Հետազոտական աշխատանքի ավարտին ես հայտնաբերեցի ինձ համար շատ կարևոր փորձի փոխանակում։ Այն ինձ հնարավորություն տվեց երեխաների միջավայրը հարմարեցնել օրվա նյութի հետ։ Դարձնել խմբասենյակը հերթական անակնկալների մի վայր, որտեղ երեխան անհամբերությամբ սպասում է իր սովորած նյութի կիրառումը իրագործել ստեղծագործական նոր ձևաչափով։

Աշխատանքային կենտրոնների աշխատանքը լրացրեց մեր պարապմունքի թերի մասը։ Այն երեխաները, ովքեր ինքնավստահ չեն խոսքի փոխանակման մեջ, բայց ստեղծագործ են և ինքնուրույն աշխատանքային կենտրոններում։

Կցանկանայի իմ հետագա աշխատանքի ընթացքում կիրառել նորագույն ուսումնական կազմակերպման մեթոդները, տեղեկատվական տեխնոլոգիաները։

✓ Արժևորել երեխաների ինքնուրույն գործունեությանը նպաստող մոտեցումները.

Ինքնուրույնությունը ձեւավորվում է աստիճանաբար։ Միևնույն ժամանակ տարիքային տարբեր փուլերում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ։

Ինքնուրույն բառը արմատների բաժանելիս հստակ սահմանում ենք ունենում (ինքն իր ուժերով, անկախ, միայնակ)։

✓ Զինվել ստեղծագործական մտածողությամբ.

Որպեսզի երեխաներն ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, անհրաժեշտ է զարգացնել նրանց մոտ նոր գաղափարներ ծնելու կարողությունը։ Ստեղծագործությունը երեխայի ներքին ակտիվությունն է կապված նրա հետաքրքրությունների, բնավորության և մտածողության առանձնահատկությունների հետ։

Ուսուցանել, նշանակում է կրկնակի սովորել։ (Ժ. Ժուբեր)

Դիդակտիկ խաղերը համարվում են ուսուցման և դաստիարակության կարևոր մաս, ուստի դրանք հիմնականում անց են կացվում դաստիարասկի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքի միջոցով։ Պարապմունքի այս բնույթը շարժում է երեխաների հետաքրքրությունը, լարում է նրանց ուշադրությունը, տալիս նոր գաղափարներ ստեղծագործական մտքի։ Երեխան արդյունքում սովորում է արագ կողմնորոշվել, ստեղծագործել,ինքնուրույն եզրակացության հանգել, իսկ ուսուցանվող խնդիրը լուծվում է անկախ երեխայի կամքից ու գիտակցությունից։ Սա է դիդակտիկ խաղի ամենամեծ առավելությունը։ Խաղալու մեջ մանուկները և երեխաները պետք է սովորեն այն, ինչ ամենայն լրջությամբ պետք է նրանց ապագայում։

Դաստիարակը երեխային հաղորդում է մարդկության կողմից մշակված ծրագրերն ու եղանակները, որոնց լավ տիրապետելն էլ տանում է դեպի յուրահատուկ ընդունակությունների զարգացում եւ այն հնարավորություն է

տալիս երեխաներին լինել ստեղծագործ, ինքնուրույն, պրպտող, նպատակին հասնող։

Յուրաքանչյուր երեխա ինչ-որ չափով հանճար է և յուրաքանչյուր հանճար՝ ինչ-որ չափով երեխա։ (Ա.Շոպենհաուր)

Պարապմունքի դիտարկում

Տնօրեն՝ Լ. Հակոբյան

Հրաշալի աշխատանք էր կատարված։ Անհատական աշխատանք յուրաքանչյուր երեխայի հետ։ Այս խմբում հատուկ կարիք ունեցող երեք երեխաները ակտիվ մասնակցություն ունեցան։ Այն ավելի է մեծացնում դաստիարակի կատարած աշխատանքի չափը։ Տպավորված եմ շատ բովանդակալից և յուրօրինակ աշխատանքի համար։

Դաստիարակ՝ Ա.Ավանեսյան

Պարապմունքն անցավ նյութերին համապատասխան,բոլոր երեխաները ներգրավված էին։ Դաստիարակի կողմից տրվող առաջադրանքները հստակ էին և բոլոր երեխաները շատ ակտիվ էին։ Պարապմունքը անցավ շատ ակտիվ և հետաքրքիր։

Դաստիարակ՝ Ա.Հովհաննիսյան

Ինտեգրված և ստացված պարապմունք,որի ընթացքում կապը՝ դաստիարակ երեխա և երեխա դաստիարակ տեսանելի էր և աշխատանքը՝հսկայական։ Երեխաները կարողացան ազատ արտահայտել իրեց միտքը, խոսքը հստակ էր և կապակցված։ Դաստիարակը ջանք չէր խնայել։

Եզրակացություն

Իմ հետազոտությունը թույլ տվեց ինձ այսպիսի եզրակացության գալ.

- ✓ Երեխան կարող ուժ է եւ մանկավարժական գործունեությունը պետք է այնպես պլանավորել, որ առավելագույնի հասցնենք երեխաների ստեղծագործական կենտրոնների զարգացումը։ Մեր օրյա հասարակությունը դաստիարակի առջև խնդիր է դրել դաստիարակել ազատ,ստեղծագործ, կիրթ, նպատակասլաց անհատականություն։
- ✓ Սովորողների ստեղծագործական կարողությունները զարգացնելը նշանակում է ստեղծագործական վերաբերմունք տրված առաջադրանքին։

Գրականության ցանկ

1. <Քայլ առ քայլ> Ծրագիր երեխաների եւ ընտանիքների համար . Քըրսթին Ա.Հանսեն, Ռոքսան Ք.Քաուֆման, Քեյթ Բըրք Ուոլշ

2. Նախաշավիղ 2006թ.

3. Նախաշավիղ 2008թ

4. Մանկապարտեզի Ավագ խմբի(5-6տ) կրթական համալիր ծրագիր. 2008թ

5. Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի Ավագ խմբում. 2007թ

6. Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում

7. <<Քայլ առ քայլ>>-ի վերապատրաստման նյութեր